ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/173

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Արթին Տրանս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Արթին Տրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Թ. Ավագյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շինանյութերի, էլեկտրականյանի և հիդրոմուրճի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.04.2022թ.-ի թիվ 26/26-1/6113-2022 գրությամբ «Արթին Տրանս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.04.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1599-2022 գրության հիման վրա, 08.04.2022թ.-ին «Արթին Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 08.04.2022թ.-ին:

11.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/173 համարի ծածկագիրը:

20.04.2022թ.-ին և 29.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.04.2022թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.04.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1599-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Հայտերի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի ներկայացրած հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հայտում ներառված բոլոր փաստաթղթերը հաստատված են կնիքով և ստորագրությամբ և քանի որ կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն, ուստի ներկայացված հայտը պետք է հաստատված լինի էլեկտրոնային

թվային ստորագրությամբ, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի, ինչպես նաև հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.3-ը: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 24.03.2022թ. ծանուցել վերոնշյալ մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է շտկված հայտը, որը հաստատված է լիազորված անձ՝ Թեհմինա Ավագյանի կողմից, սակայն հայտում առկա լիազորագրով նախատեսվում է վերոնշյալ անձի միայն մասնակցությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգին, իսկ հայտը ստորագրելու իրավասության վերաբերյալ նշումը բացակայում է: Ուստի 30.03.2022թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊ ընկերության հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արթին Տրանս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արթին Տրանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.04.2022թ.-ի գրությամբ դիմել է «Արթին Տրանս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.04.2022թ.-ի թիվ 26/26-1/6113-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը 14.04.2022թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր կողմից 11.04.2022թ. ժամը 18:05-ի ուղարկված նամակը և կից փաստաթղթերը, ցանկանում եմ առարկել այն, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը չի կարող կիրառվել «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի նկատմամբ: «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն 21.03.2022 թ.-ի դրությամբ չունի որևէ հարկային պարտավորություն (կից ներկայացնում եմ taxservice.am կայքից արտահանված 21.03.2022թ. հարկային պարտավորությունների մասին 0-ական քաղվածքը):

Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22- 20/1» ծածկագրով գնման ընթացակարգին, ներկայացրել եմ լիազորագիր իմ մասնակցության վերաբերյալ (կից ներկայացնում եմ լիազորագրի Ականավորված տարբերակը), սակայն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2022թ. կայացած նիստում լիազրագիրը համարվել է թերի և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ այն մերժվել է: Սույն որոշման հետ համաձայն չեմ, քանզի «Մասնակցել» բառը, իր մեջ ներառում է տվյալ գործընթացում կատարվող բոլոր գործողությունները, և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով հայտը կարող է մերժվել, բայց ոչ ընդգրկվել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը հայտնվում է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որևէ կետով կատարել է խախտում՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի որևէ կետի:

Ուստի, խնդրում եմ, ուսումնասիրել իմ կողմից ներկայացված փաստաթղթերը և պահպանել մեր ընկերության՝ «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի, գնումների գործընթացներին մասնակցելու իրավունքը:»:

Մասնակիցը 22.04.2022թ.-ին ներկայացրած մեկ այլ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր կողմից 11.04.2022թ. ժամը 18:05-ի ուղարկված նամակը և կից փաստաթղթերը, ցանկանում եմ առարկել այն, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը չի կարող կիրառվել «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ–ի նկատմամբ:

Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22- 20/1» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացրել եմ լիազորագիր իմ մասնակցության վերաբերյալ, սակայն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2022թ. կայացած նիստում Գնահատող հանձնաժողովի կողմից լիազորագիրը համարվել է թերի («Մասնակցել» բառի համար) և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգի 24.03.2022թ. ժամը 15:00-ին ներկայացված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №-ում նշված է, որ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը այն մերժել, իսկ ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի ՀՀ ՖՆ նախարարի տեղակալ պարոն Ա. Ավանեսյանին ուղղված նամակում նշվում է, որ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը այն մերժել և Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնել:

Սույն մերժման և Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշման հետ համաձայն չեմ, քանի որ լիազորագրում նշված «Մասնակցել» բառը, իր մեջ ներառում է տվյալ գործընթացից և լիազորություններից բխող գործողություններ կատարելը, ներառյալ հանձնել, ստանալ, ստորագրել փաստաթղթեր, էլեկտրոնային ստորագրել, բանակցությունների մասնակցել և այլն, իսկ ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով նշվում է՝

Եթե ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ուստի «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ–ի հայտը կարող է մերժվել, բայց ոչ ընդգրկվել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Գնումների գործընթացին մասնակցող մասնակիցը հայտնվում է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում, եթե որևէ կետով

կատարել է խախտում համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6- րդ հոդվածի որևէ կետի:

Գնումների Քաղաքականության վարչության պետ Սերգեյ Շահնազարյանը 08.04.2022թ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ պարոն Լևոն Օհանյանին ուղղված նամակում նշվում է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով խնդրում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի սահմանված կարգով ապահովել ընթացք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը չի կարող կիրառվել «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ–ի նկատմամբ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նշվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը՝ այն է

- *որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:*

Պարզաբանում

«ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (կից ցանկը):

Իսկ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

- *ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը*

Պարզաբանում

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգի 24.03.2022թ. ժամը 15:00 -ին ներկայացված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5-ում նշվում է, որ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ -ի հայտը մերժվել է, ուստի և պայամագիր չի կնքվել, պայամանագրի և պայմանագրի հետ կապված որևէ պարտավորություն կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնված որևէ պարտավորություն չէր կարող լինել, ինչպես նաև չէր կարող հանգեցնել պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Այսպիսով ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ

մասով 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետը խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, չի կարող կիրառվել «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի նկատմամբ:

- *բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց*

Պարզաբանում

«ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի հայտը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգի 24.03.2022թ. ժամը 15:00-ին ներկայացված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5-ում նշվում է, որ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ -ի հայտը մերժվել է, որը նշանակում է, որ «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից չէր կարող լինել և չէր կարող «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի հետ պայամանագիր կնքվել, այսինքն «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն, առանց պայամանագիր կնքելու հնարավորության, չէր կարող հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Այսպիսով

ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. Ենթակետը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, կետը չի կարող կիրառվել «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի նկատմամբ:

- *գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից*

Պարզաբանում

Հայտերը բացելուց հետո «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգի 24.03.2022թ. ժամը 15:00 -ին ներկայացված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №-ում նշվում է, որ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ -ի հայտը մերժվել է, ուստի «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն գնման գործընթացին հետագա մասնակցությունից դուրս է մնացել և չէր կարող ունենալ հնարավորթություն հետագա գնման գործընթացին մասնակցությունից հրաժարվելու:

Այսպիսով

ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի գ. ենթակետը հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա

մասնակցությունից, կետը չի կարող կիրառվել «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի նկատմամբ: Այսպիսով հայտը կարող է մերժվել, բայց ոչ ընդգրկվել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և չի կարող կիրառվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը :

Ուստի, խնդրում եմ, ուսումնասիրել իմ կողմից ներկայացված փաստաթղթերը և պահպանել մեր ընկերության «ԱՐԹԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի, գնումների գործընթացներին մասնակցելու իրավունքը:»:

4. <u>ՍՑ-LO-2022/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինանյութերի, էլեկտրականի և հիդրոմուրճի ձեռքբերման նպատակով 11.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արթին Տրանս» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով «Արթին Տրանս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.03.2022թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Արթին Տրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված բոլոր փաստաթղթերը հաստատված են կնիքով և ստորագրությամբ: Քանի որ կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն, ուստի ներկայացված հայտը պետք է հաստատված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի և վերոնշյալ ընթացակարգի հրավերի 8.18-րդ կետի:

Ուստի անհրաժեշտ է հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը /ներառյալ գնային առաջարկը/ ներկայացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված: Եթե վերոնշյալ փաստաթղթերը կհաստատվեն լիազորված անձի կողմից, ապա անհրաժեշտ է նաև ներկայացնել լիազորագիր տվյալ անձի հայտը հաստատելու իրավասության վերաբերյալ: Ներկայացված հայտում բացակայում է նաև իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.3-ը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը և Հրավերի 8.9-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Արթին Տրանս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Արթին Տրանս» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված հայտը հաստատված է լիազորված անձ Թեհմինա Ավագյանի կողմից, սակայն հայտում առկա լիազորագրով նախատեսվում է վերոնշյալ անձի միայն մասնակցությունը «ՀՀ ՊՆ-ԳԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգին, իսկ հայտը ստորագրելու իրավասության վերաբերյալ նշումը բացակայում է: Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 42-րդ կետը, որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.04.2022թ.-ի թիվ 26/26-1/6113-2022 գրությամբ «Արթին Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. շինանյութերի, էլեկտրականի և հիդրոմուրճի գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների

վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինանյութերի, էլեկտրականի և հիդրոմուրճի ձեռքբերման նպատակով 11.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինանյութերի, էլեկտրականի և հիդրոմուրճի ձեռքբերման նպատակով 11.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2022թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ «Արթին Տրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Արթին Տրանս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովի կողմից հետագայում արձանագրվել է, որ սահմանված ժամկետում «Արթին Տրանս» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված հայտը հաստատված է լիազորված անձ Թեհմինա Ավագյանի կողմից, սակայն հայտում առկա լիազորագրով նախատեսվում է վերոնշյալ անձի միայն մասնակցությունը «ՀՀ ՊՆ-ԳԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգին, իսկ հայտը ստորագրելու իրավասության վերաբերյալ նշումը բացակայում է, ինչով պայմանավորված որոշում է կայացվել Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների

խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Արթին Տրանս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության

դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.04.2022թ.-ի թիվ 26/26-1/6113-2022 գրությամբ «Արթին Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/173 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արթին Տրանս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**